

«ԱԶԳ» շաբաթաթերթ

5 փետրվարի, ուրբաթ, 2016

Մերօրյա հրեշտակներ

Չե՞ք հավատում, դե լսեք:

Հունվարի 27-ին, երեկոյան հարևանուհուս տնից վերադարձա իմ բնակարանը, բանալին դռան մեջ ջարդվեց: Մնացի դրսում:

Հարևաններս դուրս եկան, փորձեցին օգնել, չարչարվեցին, ապարդյուն: Նրանցից մեկը՝ Արտոն, հիշեց ինչ-որ համար և զանգահարեց: Տառացիորեն 15 րոպե անց արկղերով, տարաներով, շղթաներով նրանք մեր տանն էին՝ Կոմիտասի 16 շենքի 4-րդ հարկում: Չորս ջահել, կորովի տղաներ, որոնք առանց խուճապի իրենց գործն էին անում: Ամենակրտսերը շղթայով օղակը ոտքերից հագավ, ամրացրեց գոտկատեղին և անհետացավ:

Մի քանի րոպե անց իմ բնակարանի դուռը ներսից բացվեց: Ինչպե՞ս էր 4-րդ հարկի փակ եվրոպատուհանը՝ առանց ապակին կոտրելու բացել, մտել բնակարան, մնաց հանելուկ:

Հարևաններս ոգևորված հյուրասիրություն էին առաջարկում և դրամ, իսկ նրանք հրաժարվեցին: Եթե չտեսնեի, չէի հավատա, թե մեր օրերում այդքան անշահախնդիր՝ ժողովրդին իսկական ծառայողներ կան:

Վերջին պահին խնդրեցի գոնե իրենց անուն-ազգանուններն ասել:

Արտակարգ իրավիճակների նախարարության Հատուկ փրկարարական աջակցության կենտրոնի 19-րդ ջոկատ.

Կապիտաններ՝ Արմեն Ներսիսյան, Վարազդատ Մեղրակյան,

Ենթասպաներ՝ Տիգրան Մարկոսյան, Գարիկ Ստեփանյան,

Օրհնյալ լինեն ժողովրդին իսկական ծառայող հոգիները:

Շնորհակալություն»: